Գնումների պլանը հաստատելուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ՊՂ-ն նշանակում է ԳՀ:

Գնումները համակարգողի գործառույթները

Պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար

Եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ

Ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններին

Իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները

Կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը և պայմանագիրը

*Պատվիրատու հանդիսացող պետական կառավարման մարմնի համակարգում ծրագրեր իրականացնող պետական հիմնարկ գործելու դեպքում ԾԻԳ-ն է իրականացնում գնումների համակարգողի լիազորությունները :*

## 2.4 Գնահատող հանձնաժողով

### Բաժին Բ.4.

Գնումների պլանը հաստատվելու օրվան հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը պատվիրատուի ղեկավարին է ներկայացնում գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության:



Գնահատող հանձնաժողովը կազմավորվում է, դրա վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման առաջարկը ներկայացվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում

### Գնահատող հանձնաժողովի գործառույթները

Հաստատում է գնումների կամ նախաորակավորման հայտարարության և հրավերի տեքստերը

Փոփոխություններ է կատարում հրավերում

Պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ

Բացում և գնահատում է հայտերը

Որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին)

ԳՆՀ-ի գործունեության ընթացքում նեղ մասնագիտական խնդիրների լուծման ուղղությամբ Պ/Պ-ն կարող է վճարովի կամ անվճար հիմունքներով ներգրավել ԳՆՀ անդամ խորհրդատվական ձայնի իրավունքով

## 2.5 Պատասխանատու ստորաբաժանում

### Բաժին Բ.5.

Յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են ՊՂ-ի կողմից նշանակված ՊՍ-ի անդամները...

Եթե ՊՍ-ի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա ՊՍ-ի աշխատանքների կատարմանն աջակցելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ

Եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնումների պլանը հաստատվելու օրվան հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը.

Պատասխանատու ստորաբաժանման գործառույթները


Հաստատում է գնման հայտը

Հաստատում է նախաորակավորման հայտը

ՊՂ-ին է ներկայացնում ԳՆՀ-ի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց ցուցակը

Ընդունում է պայմանագրի արդյունքները

Ստուգում և հաստատում է ընդունման-հանձնման արձանագրությունը



ՊՄ-ն պարտավոր է հիմնավորել ԳՆՀ-ի կազմում ընդգրկելու նպատակով առաջարկվող թեկնածուի անհրաժեշտ մասնագիտական կարողություններ ունենալու հանգամանքը



Պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով գնման հայտը հաստատվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված գնման հայտը ՊՄ-ն գրությամբ փոխանցում է ԳՀ-ին

Եթե արձանագրվում է անհամապատասխանություն, ապա հայտը վերադարձվում է ՊՄ-ին, որն ուղղում և ԳՀ-ին է ներկայացնում ճշտված հայտը

Արձանագրված անհամապատասխանության հետ չհամաձայնելու դեպքում ՊՄ-ն հայտը հետ է վերադարձնում ԳՀ-ին



ՊՄ-ն 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր գեկուցում է ՊՂ-ին



**ՊՄ-ն պարտավոր է ուսումնասիրել ՀՀ համապատասխան շուկաները և կազմել գրավոր երաշխավորություն տվյալ հրավերի շրջանակում իրականացվելիք գնումների շուկայական գների մասին...**



*Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են ՊՄ-ի ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ*

*Հանձնման-ընդունման ձևը սահմանում է ՀՀ ֆինանսների նախարարը:  
Բանակցային ընթացակարգն առանց նախապես հայտարարության հրապարակման գնում կատարվելու դեպքում, եթե ԳՆՀ չի ձևավորվում, ապա ԳՆՀ-ի լիազորություններն հրականացնում է ՊՄ-ի ղեկավարը:*



*Նախատրակավորման ընթացակարգ կազմակերպելու դեպքում տեխնիկական առաջարկը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ԳՀ-ն հայտերի պատճենները փոխանցում է ՊՄ-ին*

*Կազմակերպվող բանակցությունների արդյունքում ՊՄ-ն հաստատում և հաստատման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ԳՀ-ին է տրամադրում գնման վերանայված հայտը*

## 2.6 Գնման հայտի կազմում

**Բաժին Բ.6.**

*Եթե ՊՍ սահմանելու ակտով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնումների պլանը հաստատվելու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում ՊՍ-ն հաստատում է գնման հայտը:*

### Գնման հայտը ներառում է՝

1. • գնման առարկայի բնութագրերը
2. • մասնակիցների որակավորման չափանիշները
3. • սպրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար պահանջող լիցենզիաների ցանկը  
• եթե կնքվելիք պայմանագրի կատարումը ՀՀ օրենսդրությամբ համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն
4. • պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ առնչվելու իրավունք ունեցող անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջները
5. • ԲԸԱՀ կազմակերպելու դեպքում՝ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների դեպքում այն անձի կամ անձանց տվյալները՝ անվանումը և գտնվելու վայրը, որոնց պետք է ուղարկվի տվյալ գնման հրավերը

*Որո՞նք են որակավորման չափանիշները տե՛ս Բաժին Բ.8.-ում*

## 2.7 Մասնակցության իրավունք

*Բաժին Բ.7.*

Ցանկացած անձ իրավունք ունի մասնակցելու գնման ընթացակարգին անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:



*Ցանկացած անձ իրավունք ունի մասնակցել գնման ընթացակարգին եթե նա՝*

- 1. • Դատական կարգով ճանաչված չէ սևանկ
- 2. • Չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական սպասնություն վճարների գծով
- 3. • նրա գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող 3 տարիների ընթացքում դատապարտված չէ եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար  
• քացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է
- 4. • ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

*Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝*

*Ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է Պ/Պ-ի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը*

1.

• գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ

2.

• որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագրի կնքելուց

3.

• օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար

4.

• կրա գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող 3 տարիների ընթացքում դատապարտված չէ եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է



## 2.8 Մասնակիցների որակավորման չափանիշներ

### Բաժին Բ.8.

*«1»-ին որակավորման չափանիշի մասով Մ-ին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով Մ-ներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե ՀՀ գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ*



### 1. «Տեխնիկական միջոցներ»



### 2. «Աշխատանքային ռեսուրսներ»

*Շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում «2»-րդ որակավորման չափանիշի մասով Մ-ին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով Մ-ներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը*

Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության...

1. Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. Մասնագիտական փորձառություն
3. Ֆինանսական միջոցներ

Մ-ն պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մ-ն պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշները:

## 2.9 Մասնակիցների որակավորման փաստաթղթեր

### Բաժին Բ.9.

Մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ նա պարտավորվում է ԳՄՕ նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)...

*Առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած Մ-ներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղն զբաղեցրած Մ-ն հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).*

**Հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր**

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը

*Առաջին տեղն զբաղեցրած Մ-ն՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած՝ պայմանագրի (կամ պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը*

*Համակարգչային և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման դեպքում առաջին տեղն զբաղեցրած Մ-ն մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է գնման առարկայի իսկությունը՝ (մատակարարված կամ մատակարարվելիք) հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և*

*պատճենը*

**Հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին**

«Տեխնիկական միջոցներ»  
չափանիշը

*Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որպես սույն որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ*

*Տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղն զբաղեցրած Մ-ն ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները*

«Ֆինանսական միջոցներ»  
չափանիշը

**Հրավերով պահանջվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը պետք է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերով ներկայացնի ֆինանսական վիճակի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթեր**

**Եթե գնումն իրականացվում է օրերի 14-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում, ապա ֆինանսական վիճակի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են միայն տվյալ ժամանակահատվածում գնում կատարելու համար մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի համար.**

**Հրավերով պահանջվում է, որ մասնակիցն հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին**

«Աշխատանքային ռեսուրսներ»  
չափանիշը

*Առաջին տեղն զբաղեցրած Մ-ն՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է պայմանագրի կատարման համար Մ-ի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները (անունը, ազգանունը, որակավորումը, աշխատանքային փորձը)*

Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղն զբաղեցրած Մ-ն ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները

### 3. Գնահատող հանձնաժողովի նիստեր


#### Բաժին Գ.

*ԳՆՀ-ն բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, ովքեր նշանակվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով...*



***Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների երկու երրորդը..***

*Հայտերի բացման նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն մեկ անդամ..*



*Հանձնաժողովի նիստն իրավագոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին ԳՀ-ն գրավոր զեկուցում է ՊԴ-ին*

***Նման բան տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ է.....***

*Մահմանվում է նիստի անցկացման օրը և ժամը, որոնք պետք է համընկնեն գնման ընթացակարգի կատեգորիան վերջին ժամկետին.*

*ոչ ավելի, քան 5 աշխատանքային օրով կատեգորիան գործընթացը*

*ապահովում է տվյալ անդամի ներկայանալը հանձնաժողովի նիստին*

*կամ տվյալ անդամի փոխարեն, ՊՄ-ի ստաջսրկության հիման վրա, նշանակում է ԳՆՀ-ի նոր անդամ*

**ԳՆՀ-ի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել հանձնաժողովի նիստին ներկա անդամների կեսից ավելին...**

*Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է.*



*ԳՆՀ-ի նիստերը տղագրվում (կամ տեսաձայնագրվում կամ ձայնագրվում) և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա ԳՆՀ-ի անդամները և ԳՀ-ն պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը*

*Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է..*

**ԳՆՀ-ի անդամները և ԳՀ-ն պարտավոր են ապահովել մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը...**



*ԳՆՀ-ի արտահերթ նիստը հրավիրում է ԳՀ-ն՝ ՊՂ-ի գրավոր հանձնարարությամբ կամ ԳՆՀ անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց նշած ժամկետում և օրակարգով*

*Արտահերթ նիստ հրավիրելու, դրա օրակարգի և ժամկետի մասին ԳՀ-ն նիստից առնվազն քսանչորս ժամ առաջ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղյակ է պահում ԳՆՀ-ի անդամներին*

*ԳՆՀ-ի անդամի կամ ԳՀ-ի կողմից իր պարտականությունների չկատարումը, ինչպես նաև ԳՆՀ-ի անդամ չհանդիսացող պաշտոնատար անձի՝ ԳՆՀ-ի գործունեությանը միջամտությունը հանգեցնում են այդ անդամին (պաշտոնատար անձին) ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու և պատակով միջոցների ձեռնարկմանը*



*ԳՆՀ-ն պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար*



### 3.1 Մասնակիցների որակավորման չափանիշների գնահատման կարգը Գ.1.

#### Բաժին Գ.1.

#### **«Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝**

1. Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է Բանակցային ընթացակարգի առանց նախապես հայտարարության հրապարակման «Գնում մեկ անձից» ընթացակարգի կազմակերպման համար նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, որ.

#### **ա) դատական կարգով սնանկ ճանաչված չէ.**



#### **բ) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.**



գ) իր գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,



դ) ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,



**ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:**



Բացի վերոնշյալ դեպքից՝ «Գնումներ մեկ անձից», նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, **այդ թվում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից**<sup>13</sup> այլ **փաստաթղթեր չեն կարող պահանջվել:**




Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) **մասնագիտական գործունեության համապատասխանություն** պայմանագրով նախատեսված գործունեությանը,



2) **մասնագիտական փորձառություն,**



<sup>13</sup> Պարզեցված ընթացակարգի կիրառման ժամանակ ընդգծված, շեղ և հաստեցված ձևով գրված բառերը հանել

3) տեխնիկական միջոցներ,



4) ֆինանսական միջոցներ,



5) աշխատանքային ռեսուրսներ:



Ընդ որում մասնակցի՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը պետք է գնահատվի հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով պետք է ներկայացնի հետևյալ տեղեկությունները.

Նախկինում կատարված պայմանագրերի <sup>14</sup>		
առարկան	ծավալը՝ գումարային արտահայտությամբ <sup>15</sup> (ՀՀ դրամ)	պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	2	3
Տարեթիվը՝ ..... թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ ..... թվական		
1.		

<sup>14</sup> Մ-ն պարտավոր չէ ներկայացնել յուրաքանչյուր տարվա համար նմանատիպ պայմանագրի կամ պայմանագրերի օրինակ Մ-ն կարող է ներկայացնել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի, ինչպես նախորդող տարվա այնպես էլ 3 տարիների ընթացքում նմանատիպ պայմանագրի կամ պայմանագրերի օրինակներ

<sup>15</sup> Նախկինում ներկայացվող պայմանագրերի հանրագումարը պետք է պակաս չլինի Մ-ի կողմից ներկայացվող պայմանագրի գնի 50 տոկոսից

2.		
..		
Տարեթիվը՝ ..... թվական		
1.		
2.		
..		

2. Մ-ն համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու **տարվա և դրան նախորդող երեք տարիների** ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ **ասպրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման** գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում -----<sup>16</sup> **ասպրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը:**

**«Մասնագիտական փորձառություն» չափանիշը պետք է գնահատվի հետևյալ կարգով՝**

1. Մ-ն հայտով պետք է ներկայացնի հայտարարություն, որ հայտը ներկայացնելու **տարվա և դրան նախորդող երեք տարվա** ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) **առնվազն մեկ պայմանագիր:** Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե՝

*ա.*<sup>17</sup> դրա (դրանց) շրջանակներում **մատակարարված ասպրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների** ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում **Մ-ի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից,**

*բ.*<sup>18</sup> դրա (դրանց) շրջանակներում **մատակարարված ասպրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների** ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում **մատակարարված ասպրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների** ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային **առաջարկի քսան տոկոսից,**

*գ.*<sup>19</sup> դրա (դրանց) շրջանակներում **մատակարարված ասպրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների** ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում **մատակարարված ասպրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների** ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի **շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի երեսուն տոկոսից:** Նմանատիպ են համարվում ----- **ասպրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը:**

2. **Առաջին տեղն զբաղեցրած**<sup>20</sup> Մ-ն որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը,

<sup>16</sup> Պատվիրատուն պարտավոր է ներկայացնել, որոնք են համարվում նմանատիպ պայմանագրեր  
<sup>17</sup> Պետք է սահմանել «ա» տարբերակը՝ մինչև երեք հարյուր հիսուն միլիոն դրամ նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում  
<sup>18</sup> Պետք է սահմանել «բ» տարբերակը՝ երեք հարյուր հիսուն միլիոն դրամից մինչև մեկ միլիարդ դրամ նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում  
<sup>19</sup> Պետք է սահմանել «գ» տարբերակը՝ մեկ միլիարդ դրամից ավելի նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում  
<sup>20</sup> Պարզեցված ընթացակարգի կիրառման ժամանակ ընդգծված, շեղ և հաստեցված ձևով գրված բառերը հանել



իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող



ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ



պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդ որում<sup>21</sup>, առաջին տեղն զբաղեցրած Մ-ն մինչև **պայմանագրի կնքումը**\* ներկայացնում է գնման առարկայի իսկությունը /մատակարարված կամ մատակարարվելիք/ հավաստող՝ արտադրողի



կողմից տրամադրված վկայականի

բնօրինակը և պատճենը:

**\*Պայմանագրի կնքման մասին որոշման** և **հայտարարության օրինակելի ձևերը տե՛ս Հավելված N 10-ում:**



3. Մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար , եթե վերջինս ապահովում է նախատեսված պահանջները:

**«Տեխնիկական միջոցներ» չափանիշը պետք է գնահատվի հետևյալ կարգով՝**

1. Մասնակիցը հայտով պետք է ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման



համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների

առկայության մասին.

2. Եթե հրավերով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա **առաջին տեղն զբաղեցրած** Մ-ն որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացնի այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար



առաջին տեղն զբաղեցրած Մ-ն պետք է ներկայացնի դրանց տեխնիկական անձնագրերի

<sup>21</sup> Սույն պարբերությունը կիրառվում է՝ համակարգչային և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման դեպքում

և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացվեն հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը
1			
2			


3. Մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն են<sup>22</sup>

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
..... ավտոմեքենա <sup>23</sup>	Ցանկացած	... <sup>24</sup> հատ
Գլղոն	.... <sup>25</sup> տոնայից ոչ պակաս	... հատ

**«Ֆինանսական միջոցներ» չափանիշը պետք է գնահատվի հետևյալ կարգով<sup>26</sup>**

**1. Առաջին տեղն զբաղեցրած** Մ-ն պետք է որակավորման չափանիշները հիմնավորող



փաստաթղթերով ներկայացնի վարկային գծի տրամադրման մասին բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքած պայմանագիր կամ բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից տրված երաշխիք: Ընդ որում, վարկային գծի կամ երաշխիքի չափը չպետք է պակաս լինի մասնակցի գնային առաջարկի տասը տոկոսից, իսկ գործողության ժամկետը չպետք է պակաս լինի պայմանագրի ամբողջ ծավալով կատարման վերջնաժամկետից՝ բացառությամբ պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետի:

Ընդ որում<sup>27</sup> վարկային գիծը կամ երաշխիքը ներկայացվում է միայն տվյալ ժամանակահատվածում գնում կատարելու համար մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի համար և միակողմանի հաստատված հայտարարություն՝ **տուժանք\***, որպես հետագայում նախատեսվելիք ֆինանսական միջոցների մատով վարկային գծի կամ երաշխիքի տրամադրման ապահովում: Տուժանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի և տվյալ

<sup>22</sup> Ներկայացված օրինակը վերաբերում է մասնավորապես շինարարական աշխատանքների կատարման համար  
<sup>23</sup> Գրել անհրաժեշտ տեխնիկական միջոցի տեսակը, օրինակ բեռնատար ավտոմեքենա  
<sup>24</sup> Գրել անհրաժեշտ քանակը, օրինակ՝ 1 հատ  
<sup>25</sup> Գրել անհրաժեշտ քանակը, օրինակ՝ 3 տոննա  
<sup>26</sup> Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի պետք է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերով ներկայացնի ֆինանսական վիճակի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթեր: Ֆինանսական փաստաթղթերի գնահատման կարգը և ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը: ՀՀ ֆինանսների նախարարի 20.06.2013թ. N 500-Ն հրամանի համաձայն՝ այն ընկերությունների դեպքում, որոնց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ, «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է՝ չձևափոխված /դրական/ աուդիտորական եզրակացության ցուցանիշի հիման վրա և աուդիտորական եզրակացությունը պետք է տրված լինի ՀՀ կառավարության 29.11.2011թ. N 1931-Ն որոշմամբ նախատեսված «Աուդիտի միջազգային ստանդարտ 700»-ի պահանջներին համապատասխան  
<sup>27</sup> Եթե գնումն իրականացվում է Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում

Ժամանակահատվածում գնում կատարելու համար մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի տարբերության տասը տոկոսից:

***\*Տուժանքի մասին համաձայնության օրինակելի ձևը տե՛ս ....:***



2. Մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար , եթե վերջինս ապահովում է նախատեսված պահանջները:

**«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը պետք է գնահատվի հետևյալ կարգով՝**

1. Մասնակիցը հայտով պետք է ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման



համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2. Եթե հրավերով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա ***առաջին տեղն զբաղեցրած*** Մ-ն՝ որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
		Ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

Ընդ որում աշխատանքային ռեսուրսները հիմնավորելու համար ***առաջին տեղն զբաղեցրած*** Մ-ն ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3. Մ-ի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են<sup>28</sup> առնվազն 3 մասնագետների առկայությունը<sup>29</sup>,

- որոնք ունեն բարձրագույն /կամ միջին մասնագիտական կրթություն/ ճարտարագետ-շինարարի որակավորում,
- որոնց աշխատանքային փորձը շինարարության ոլորտում պետք լինի առնվազն երեք տարի:

<sup>28</sup> Տես՝ տողատակ 6-ը


<sup>29</sup> Աշխատանքային ռեսուրսների նկատմամբ պահանջները հրավերում ներառվում են գնման հայտով դրանց համար սահմանված պահանջներին համապատասխան

### Մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)։

2) հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին։

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում



է։

**!!! Ներկայացվածից տարբերվելու կամ այլ գնահատման կարգ ընտրելու դեպքում, եթե կան նման անհրաժեշտություն, Պ/Պ-ն պարտավոր է նոր գնահատման կարգի նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարություն հաստատման:**



## 3.2. Ծանուցումների պատրաստում Գ.2.

### *Բաժին Գ.2.*

Պ/Պ-ն Մասնակիցների հետ փոխադարձ շփումն ապահովում է անհատական կամ հրապարակային ծանուցումների միջոցով:

Անհատական ծանուցումները Պ/Պ-ն ուղարկում է յուրաքանչյուր Մասնակցի անձնական էլեկտրոնային հասցեին, կամ թղթային տարբերակով Մասնակցի հասցեին՝ փոստով:

Հրապարակային ծանուցումները Պ/Պ-ն հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) ([www.azdarar.am](http://www.azdarar.am)) պաշտոնական ինտերնետային կայքում:

### 3.3. Հայտերի ընդունում Գ.3.

#### Բաժին Գ.3.


- ❖ *Հայտերի ընդունման համար հատկացված ժամանակահատվածը սահմանվում է հրավերով*



- ❖ Պ/Պ-ն պարտավոր է ընդունել բոլոր ներկայացվող հայտերը մինչև «Հայտերի ընդունման վերջնաժամկետը», որը համընկնում է հայտերի բացման օրվան և ժամին:



- ❖ Հայտն ընդունելիս գրանցամատյանի պատասխանատուն պետք է ստուգի հայտի կազմման համապատասխանությունը հրավերի պահանջներին, այն է՝



- ❖ Գրանցամատյանում գրանցվում են ինչպես հրավերի պահանջներին համապատասխան կազմված հայտերը, այնպես էլ խախտումներով կազմված հայտերը, սակայն վերջինները գրանցվում են գրանցամատյանում դրա համար հատուկ տեղ հատկացված բաժնում «Գրանցամատյանի էջ 2»:
- ❖ Միայն կազմված հայտերը չեն բացվում ԳՆՀ-ի նիստում և նույնությամբ վերադարձվում են հայտ ներկայացրած կազմակերպությանը:
- ❖ Հայտերը չի կարելի բացել դրա համար սահմանված ժամկետից շուտ:
- ❖ Գրանցամատյանի պատասխանատուն Հայտի վրա նշում է դրա մուտքի օրը, ժամը և ստացման հերթական համարը:
- ❖ Հայտերը ԳՆՀ-ի նախագահի կողմից բացվում են հայտերի բացման նիստում՝ ըստ ստացման հերթականության:

### 3.4. Ընտրված (հաղթող) Մասնակցի որոշում Գ.4

#### Բաժին Գ.4

Ընտրված (հաղթող) Մասնակիցն ընտրվում է Հայտերի բացման նիստի 1-ին տեղն զբաղեցրած այն Մ-ն, ում Պ/Պ-ն առաջարկել է ներկայացնել գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորումը հավաստող բոլոր փաստաթղթերը և համապատասխան նիստում Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող:

*Ընտրված Մասնակից՝ Մասնակից (մասնակիցներ), որին Պ/Պ-ն առաջարկում է կնքել պայմանագիր*



*(շրջանակային համաձայնագիր)*

Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 5 օրացուցային օրվա ընթացքում, ընտրված Մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված Մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում



*Ընտրված Մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պ/Պ-ն ծանուցում է ընտրված Մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը*




Եթե ընտրված Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը

Չի ներկայացնում Պ/Պ-ին պայմանագիր



Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում չի ներկայացնում նաև կանխավճարի ապահովումը




Նշված դեպքերից որևէ մեկը տեղի ունենալու դեպքում Մասնակիցն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից

### 3.5. Մասնակիցների հետ բանակցությունների վարում Գ.5.

#### ***Բաժին Գ.5.***

***!!!Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են***



**Բացառություն!!!**

**Եթե ԲԸ-ին մասնակցել է մեկ Մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ:**

**Վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:**

**Բաց ընթացակարգ կազմակերպելու, ինչպես նաև շրջանակային համաձայնագրերի միջոցով փաստաթղթային ձևով գնում (բացառությամբ ավիասպասարկման ծառայությունների գնումների) կատարելու դեպքերում`**

*Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները` առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները*

**Եթե գրավոր բաժնի օրվա ընթացքում ԳՆՀ քարտուղարը բավարար գնահատված բոլոր Մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:**

1.

• Բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը

2.

• Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները

Առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու քանակցային ընթացակարգ կազմակերպվելու դեպքում՝

*ԳՆՀ-ի որոշմամբ ԳՀ-ն հրավերին համապատասխանող գնահատված հայտ ներկայացրած մասնակցին հրավիրում է բանակցությունների: Բանակցությունները կարող են հանգեցնել մասնակցի հայտի փոփոխմանը, սակայն, ոչ հայտով ներկայացված գնի ավելացմանը կամ հրավերի պայմանների փոփոխությանը: Բանակցությունների արդյունքները հաստատվում են գնահատող հանձնաժողովի որոշմամբ, որի հիման վրա կնքվում է պայմանագիր:*

Աշխատանքների նախագծման, հետազոտական, փորձաքննության, փորձարարական կամ գիտական նպատակներով ոչ նյութական առանձին ակտիվների ձեռքբերման նպատակով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով քանակցային ընթացակարգ կազմակերպվելու դեպքում՝

*Ոչ ուշ, քան տեխնիկական առաջարկները ներկայացվելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում ԳՆՀ-ի քարտուղարը նախատրակավորված բոլոր մասնակիցներին հրավիրում է միաժամանակյա բանակցությունների*

Բանակցություններ կազմակերպելու մասին ծանուցումը ԳՆՀ-ի քարտուղարը Մասնակիցներին ուղարկում է էլեկտրոնային եղանակով՝ նշելով բանակցությունների անցկացման վայրը, օրը և ժամը՝ ոչ ուշ, քան բանակցությունների անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:  
*Տեխնիկական առաջարկ ներկայացրած Մասնակցի հետ առանձին բանակցություններն արգելվում են: Բանակցությունների արձանագրությունը ստորագրում են բանակցությունների մասնակիցները:*

Արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ կազմակերպվելու դեպքում՝

*Հայտերի գնահատման արդյունքները հրապարակվում են գնահատող հանձնաժողովի նիստում, որի ընթացքում ընտրված մասնակցին (մասնակիցներին) որոշելու համար գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ*

Հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստ կազմակերպելու մասին ծանուցումը, ԳՆՀ-ի քարտուղարը հայտեր ներկայացրած բոլոր Մասնակիցներին ուղարկում է էլեկտրոնային եղանակով՝ նշելով նիստի անցկացման վայրը, օրը և ժամը՝ ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

**!!!Միաժամանակյա բանակցություններում ներգրավվում են միայն բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները:**

Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակցի հետ առանձին բանակցություններն արգելվում են:

Բանակցություններում ներգրավված յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնի առաջարկը հրապարակվում է մյուս Մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

**Բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ ամենացածր գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը համարվում է ընտրված Մասնակից:**

Մրցակցային երկխոսության ընթացակարգ կազմակերպվելու դեպքում՝

*Ոչ ուշ, քան նկարագրերի առաջարկները ներկայացվելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում ԳՆ-ն նախատրակավորված բոլոր մասնակիցներին հրավիրում է միաժամանակյա բանակցությունների*

Բանակցություններ կազմակերպելու մասին ծանուցումը, ԳՆ-ն մասնակիցներին ուղարկում է էլեկտրոնային եղանակով՝ նշելով բանակցությունների անցկացման վայրը, օրը և ժամը՝ ոչ ուշ, քան բանակցությունների անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

**!!!Նկարագրերի առաջարկ ներկայացրած մասնակցի հետ առանձին բանակցություններն արգելվում են:**

*Բանակցությունների արդյունքում կազմվում է գրավոր արձանագրություն, որն ստորագրում են բանակցությունների մասնակիցները:*

*Եթե ընտրված մասնակցի գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա պատվիրատուն կարող է ընտրված մասնակցին առաջարկել նվազեցնել իր գնային առաջարկը: Անհամաձայնության դեպքում տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և պատվիրատուն բանակցությունների է հրավիրում 2-րդ, իսկ վերջինիս*



*անհամաձայնության դեպքում՝ 3-րդ տեղն զբաղեցրած մասնակցին, իսկ վերջինիս անհամաձայնության դեպքում ընթացակարգը հայտարարվում է չկայացած:*

### 3.6. Անգործության ժամկետի հայտարարում Գ.6.

*Պատվիրատուն մինչև պայմանագիր կնքելը, հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, որով սահմանում է անգործության ժամկետ*

***Բաժին Գ.6.***

*Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:*

*Անգործության ժամկետը գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում առնվազն 10 օրացուցային օր է, իսկ չգերազանցող գնումների դեպքում՝ առնվազն 5 օրացուցային օր:*

*Ընտրված Մասնակից հայտարարելու ԳՆՀ-ի որոշմանը հաջորդող 2 օրացուցային օրվա ընթացքում ԳՀ-ն ծանուցում է Մասնակցին, ներկայացնում պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը*

*Սահմանված անգործության ժամկետում Պ/Պ-ի վրա բողոք ստանալու դեպքում գնման գործընթացը կասեցվում է 20 օրացուցային օրով, մինչև ԳԲԽ-ի որոշում կայացնելը*

Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե՝

- ❖ Միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:
- ❖ «Գնումների մասին» ՀՀ օրենքով չի պահանջվում պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակում:

# 4. Պայմանագրի կնքում Դ

***Բաժին Դ.***

**Բաց ընթացակարգի ձևով գնում կատարելու դեպքում, մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:  
Պատվիրատուն պայմանագիր կնքելու որոշման օրինակելի ձևերին կարող է ծանոթանալ [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքից**

Օրենսդրություն	Հարգելի այցելու	
Գնումների հայտարարություններ	Սահմանափակ ընթացակարգի կազմակերպման հայտարարություններ	րավետության ֆինանսների նախարարության Պետական նետային կայք:
Շրջանակային համաձայնագրեր	Բաց ընթացակարգի հայտարարություններ	արկալ տեղեկատվություն ստանալ Հայաստանի մակարդի վերաբերյալ: Հուսով ենք, որ կաթը Ձեզ համար յրային միջոցների ծախսման գործընթացի բարելավմանը, յունենա Հայաստանի Հանրապետության գարգացման
Գնումների պլաններ	Մրցակցային երկխոսության ընթացակարգի կազմակերպման նախարարակալորման հայտարարություններ	ֆինանսների նախարարություն
Մրցույթի հանձնաժողովների միատերի արձանագրություններ	Մրցակցային երկխոսության ընթացակարգի կազմակերպման նախարարակալորման հայտարարություններ	
Հաշվետվություններ	Քանակային ընթացակարգի կազմակերպման նախարարակալորման հայտարարություններ	<b>րեկան հաշվետվության վերաբերյալ</b>
Բողոքարկում	Պարզեցված ընթացակարգի հայտարարություններ	մ տեղադրված է 2012 թվականի գնումների մասին ՀՀ պետական մարմինների կողմից ՀՀ ֆինանսների նախարարության հիման վրա: Հաշվետվության մեջ ՀՀ նրտակարգ իրավիճակների նախարարության լության», ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության իրականացման գրասենյակ» ՊՀ-ի եւ ՀՀ պության գնումների վերաբերյալ տեղեկությունները, քանի որ ժամկետում դրանք չեն ներկայացրել ՀՀ ֆինանսների
Վերապատրաստում	Պայմանագիր կնքելու մասին հայտարարություններ	Սահմանափակ ընթացակարգ
Պայմանագրերում կատարված փոփոխություններ	Վնքված պայմանագրերի մասին հայտարարություններ	Բաց ընթացակարգ
Էլեկտրոնային գնումներ	Հրավերներում կատարված փոփոխություններ	Մրցակցային երկխոսության ընթացակարգ
Գնումների որակավորում	ԾԻԳ-եռի հայտարարություններ	Բանակցային ընթացակարգ հայտարարությամբ
Գնումների բողոքարկման խորհրդի անդամների ցուցակ		Բանակցային ընթացակարգ հայտարարությամբ
Տեխնիկական բնութագրերի էլեկտրոնային կատալոգ		Բանակցային ընթացակարգ հայտարարությամբ
Հաճախ սրվող հարցեր		Բանակցային ընթացակարգ հայտարարությամբ
Հղումներ		Բանակցային ընթացակարգ հայտարարությամբ

*Պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում Մասնակիցն պետք է ներկայացնի պայմանագրի ապահովումը (եթե պայմանագրով կանխավճար է նախատեսված՝ նաև կանխավճարի ապահովումը) և ստորագրված պայմանագիրը*

Կանխավճարի ապահովումը, ի տարբերություն պայմանագրի կատարման ապահովման, ներկայացվում է բանկային երաշխիքի տեսքով՝ օրինակելի ձևը տե՛ս Հավելված N 13-ում:

*Պ/Պ-ն պայմանագիրը կնքելուց հետո կնքված  
պայմանագրի մեկ օրինակն առաքում է  
Մասնակցին...*

#### 4.1. Պայմանագրային հարաբերությունները Դ.1.

##### ***Բաժին Դ.1.***

Գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Պ/Պ և Մասնակցի միջև պայմանագրային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ և նրանց միջև կնքված պայմանագրով:

## 4.2. Ընթացակարգի արձանագրություն Դ.2.

### Բաժին Դ.2.


*Գնման ընթացակարգի արձանագրություն կազմվում է, եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը (1 մլն ՀՀ դարմ):*

Գնման ընթացակարգի արձանագրությունը պարունակում է՝

1.
  - Պ/Պ-ի անվանումը, գտնվելու վայրը
  - Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը
2.
  - Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները
  - Հայտերով ներկայացված գները
3.
  - Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները
  - Հայտեր ներկայացրած Մասնակիցների ավյալները
4.
  - Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները
  - Հայտի մերժման դեպքում դրա հիմնավորումը
5.
  - պայմանագիրը
  - գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում դրա հիմնավորումը
6.
  - հակաօրինակյան գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը
7.
  - գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները
  - այլ անհրաժեշտ տեղեկություններ

## 5. Գնման ձևեր Ե



*Բաժին Ե.*



# 5.1. Բաց ընթացակարգ Ե.1.

**Բաժին Ե.1.**

ՊՂ-ն հաստատում է գնումների պլանը






ՀՀ Փոխպետնախարարի կենտրոնի ՊՂ-ն և ԳՀ-ն հաստատելու մասին 2013թ. 11 ամսվա 28-ին



Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին

Համար	Նկարագրություն	Գնումների արժեքը	Գնումների արժեքը	Գնումների արժեքը	Գնումների արժեքը
1	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	1	1000	1000	1000
2	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	2	1000	1000	1000
3	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	3	1000	1000	1000
4	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	4	1000	1000	1000
5	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	5	1000	1000	1000
6	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	6	1000	1000	1000
7	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	7	1000	1000	1000
8	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	8	1000	1000	1000
9	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	9	1000	1000	1000
10	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	10	1000	1000	1000
11	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	11	1000	1000	1000
12	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	12	1000	1000	1000
13	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	13	1000	1000	1000
14	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	14	1000	1000	1000
15	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	15	1000	1000	1000
16	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	16	1000	1000	1000
17	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	17	1000	1000	1000
18	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	18	1000	1000	1000
19	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	19	1000	1000	1000
20	Պետական կառուցվածքի մասին 2013 թ. 11 ամսվա 28-ին	20	1000	1000	1000

ՊՄ-ն կազմում և հաստատում է գնման հայտերը






ՊՂ-ն արձակում է հրաման ՊՄ և ԳՀ սահմանելու մասին


Գնման հայտերը հաստատվում են ՊՄ-ի առաջին նիստով, որն արձանագրվում է


ՊՂ-ն արձակում է հրաման ԳՀ սահմանելու մասին





Ներքին  
փաստաթղթաշրջանառության  
փաստաթուղթ



Նկարագրված քայլերը գնման պլանավորման փուլն է...



Անհամապատասխանություն չարձանագրելու դեպքում ԳՀ-ն կազմում է հայտարարության և հրավերի տեքստերը...



**ԳՆՀ-ի** դրական եզրակացությունը ստանալուց հետո ԳՀ-ն հայտարարության և **հրավերի** տեքստը ներկայացնում է Հրապարակման մարմնին **հրապարակման նպատակով**



Բաց ընթացակարգի հայտարարությունը կազմվում է հայերենով, ռուսերենով և անգլերենով.....  
**Հրապարակման** պահից մինչև **ԳՆՀ-ի** 2-րդ` հայտերի բացման նիստի օրը ԳՀ-ն ընդունում և գրանցում է հայտերը **գրանցամատյանում**




ԳՀ-ն **ԳՆՀ-ի** հայտերի բացման նիստի օրը կազմում է **ԳՆՀ-ի** կողմից հայտերի գնահատման համար անհրաժեշտ **գնահատման թերթիկները**

ԳՀ-ն գրանցամատյանը փակում է սահմանված կարգով, մասնակիցների հայտերը և գնահատման թերթիկները համակարգում ըստ հերթականության և հայտարարում ԳՆՀ-ի հայտերի բացման նիստի սկիզբը

Հայտերի բացման նիստ



ԳՀ-ն գրանցամատյանը, մասնակիցների հայտերը և գնահատման թերթիկները փոխանցում է ԳՆՀ-ի նախագահին



ԳՆՀ-ի անդամները լրացնում են գնահատման թերթիկները ըստ հայտերի բացման հերթականության

ԳՆՀ-ի անդամները ԳՀ-ին վերադարձնում են գնահատման թերթիկները




ԳՀ-ն կազմում է հայտերի բացման նիստի արձանագրություն



*ԳՀ-ն կազմում է և ուղարկում է ծանուցում/ծանուցումներ հայտերի բացման նիստի առաջին տեղն զբաղեցրած մասնակցին/մասնակիցներին*

Հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին



*ԳՀ-ն ընդունում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի/մասնակիցների հայտերը և գրանցում գրանցամատյանում ըստ ստացման հերթականության*

*Հայտերի գնահատման նիստ*



*ԳՆՀ-ի անդամները լրացնում են գնահատման թերթիկները*




*ԳՀ-ն գրանցամատյանը փոխանցում է ԳՆՀ-ի նախագահին*

*Հայտերի գնահատման նիստում հայտարարվում են ընտրված (հաղթող) կազմակերպության/կազմակերպությունների անունները և անգործության ժամկետի սկիզբը*





ԳՀ-ն հրապարակող մարմինն է ուղարկում պայմանագիր/պայմանագրեր կնքելու մասին որոշումը



ԳՀ-ն ընտրված (հաղթող) մասնակցին ուղարկում է ծանուցում

Անգործության ժամկետը\* լրանալուց հետո ընտրված (հաղթող) մասնակցի/մասնակիցների հետ կնքվում է պայմանագիր/պայմանագրեր



ԳՀ-ն պայմանագիր կնքելուց, իսկ չկնքելու դեպքում՝ անգործության ժամկետը լրանալուց հետո, հրավիրում է ԳՆՀ-ի ընթացակարգի ամփոփման նիստ



*ԳՀ-ն կազմում է պայմանագրի կնքման մասին հայտարարություն և գնման ընթացակարգի արձանագրություն, որն ուղարկում է լիազոր մարմին հրապարակման նպատակով*

*ԳՀ-ն արխիվացնում է գնման ընթացակարգի փաստաթղթերը  
 ԳՀ-ն փոխանցում է կնքված **պայմանագրի** օրինակը ՊՄ-ին  
 ՊՄ-ն ստանձնում է հետպայմանագրային ժամանակահատվածի պատասխանատվությունը (պայմանագրի կառավարման), կազմում **պայմանագրի ընդունման ակտը** և լրացնում **հանձնման-ընդունման արձանագրությունը** և ներկայացնում ՊԴ-ի հաստատմանը*

# 5.2. Պարզեցված ընթացակարգ Ե.2.

Բաժին Ե.2.

ՊՂ-ն հաստատում է գնումների պլանը

Պնակային համար	Պնակային անվանում	Եզրակազմող	Կատարող	Մեթոդ	Գնման արժեքը (ՀՀ դրամ)	Մեթոդ
1	Բնական սնունդ	Սյունիք	1 1000 0	ԲՄՃԱ		
2	Տարբերակային սնունդային քննարկում	Սյունիք	1 145 0	ԲՄՃԱ		
3	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 40 0	ԲՄՃԱ		
4	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 1000 0	ԲՄՃԱ		
5	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
6	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
7	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
8	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
9	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
10	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
11	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
12	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
13	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
14	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
15	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
16	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
17	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
18	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
19	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
20	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
21	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
22	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
23	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
24	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
25	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
26	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
27	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
28	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
29	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		
30	Կապիտալ ծախսերի կատարում	Սյունիք	1 200 0	ԲՄՃԱ		

ՊՂ-ն արձակում է հրաման ՊՍ և ԳՀ սահմանելու մասին



Գնման հայտերը հաստատվում են ՊՍ-ի առաջին նիստով, որն արձանագրվում է


ՊՍ-ն կազմում և հաստատում է գնման հայտերը



ՊՂ-ն արձակում է հրաման ԳՆՀ սահմանելու մասին



Ներքին փաստաթղթաշրջանառության փաստաթուղթ



Նկարագրված քայլերը գնման

